ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ր Ա Մ Ա Ն

20 դեկտեմբերի 2017 թվականի N 204 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 31-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1400-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կանոնադրության 12-րդ կետի <<դ>> ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 15-ի <<2017 թվականի ընթացքում ըստ ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության չափաքանակները հաստատելու մասին>> N 31-Ա հրամանի հավելվածով հաստատված աղյուսակի 2-րդ տողի <<Արտաշատ>> ՋՕԸ-ի պետական ֆինանսական աջակցության չափաքանակի <<834,960.0>> թիվը փոխարինել <<874,960.0>> թվով, 7-րդ տողի <<Թալին>> ՋՕԸ-ի պետական ֆինանսական աջակցության չափաքանակի <<544,100.0>> թիվը փոխարինել <<558,100.0>> թվով, 8-րդ տողի <<Կոտայք>> ՋՕԸ-ի պետական ֆինանսական աջակցության չափաքանակի <<403,170.0>> թիվը փոխարինել <<372,533.9>> թվով, 10-րդ տողի <<Շիրակ>> ՋՕԸ-ի պետական ֆինանսական աջակցության չափաքանակի <<87,680.0>> թիվը փոխարինել <<109,926.1>> թվով, իսկ ՋՕԸ-ների պետական ֆինանսական աջակցության չափաքանակի ընդամենը <<5,207,500.0>> թիվը փոխարինել <<5,253,110.0>> թվով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2017թ. դեկտեմբեր 20

Երևան